



**ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ**

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ. /Ֆաքս/ +1 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
info_aparan@aarhus.am

ՀՀ Բնապահպանական պետական
տեսչության Արագածոտնի տարածքային
բաժին պետ՝ Վանիկ Մովսիսյան

16.06.15թ.

Ապարանի Օրհուս կենտրոնի
համակարգող՝ Նատալյա Մանուկյանից

Հարգելի՛ պարոն Մովսիսյան.

Ապարանի Օրհուս կենտրոնը ա/թ մայիս ամսին ահազանգ էր ստացել այն մասին, որ Արագածոտնի մարզում գտնվող Ապարանի ջրամբարի ափամերձ մասերում նկատվել է մեծ քանակությամբ սատկած ձուկ : Իրողությունը պարզելու նպատակով մայիսի 27-ին կենտրոնն այց կազմակերպեց ջրամբար: Այցելության ընթացքում պարզվեց, որ ձկների զանգվածային անկման մասին ահազանգը համապատասխանում է իրականությանը, ինչի վերաբերյալ էլ տեղեկացրել էր ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին:

Օրերս Օրհուս կենտրոնը պատասխան է ստացել իր գրության վերաբերյալ, որով հայտնվում է, որ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության մասնագետները, մարզային ԲՊՏ-ի տեսուչի հետ միասին ա/թ հունիսի 8-ին ուսումնասիրել են Ապարանի ջրամբարի ափամերձ տարածքները: Մատկած ձուկ չի հայտնաբերվել, չնայած՝ տեղացիները վկայում են, որ աշնանը և գարնանը նկատել են: Ձրից վերցվել է նմուշ և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության լաբորատորիա ջրի բաղադրությունը ևս մեկ անգամ փորձաքննություն անցնելու համար: Արդյունքների մասին լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ մարզային բնապահպանական պետական տեսչությունից:

Հարգելի՛ պարոն Մովսիսյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, ելնելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանության և բնակչությանը հավաստի տեղեկատվության տրամադրելու կարևորությունից,

իսդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին պաշտոնական տեղեկատվության տրամադրել ջրամբարի ջրի բաղադրության փորձաքննության արդյունքների և ձկների անկման պատճառի մասին:

Կանխավ շնորհակալություն:
Հարգանքով՝
Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Նատալյա Մանուկյան